



ՊԱՏԻՎ ՈՒՆԵՍ



ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊՒ ԱՐՇԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ Թիվ 5(30), 30 հունիսի, 2020թ. ԶՅ ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՎԱՐՉԱՊԵՏԸ ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՎԱՎԱՐ ԿԱԶՄԻՆ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՊԵՏԻՆ



Յունիսի 9-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ոստիկանության ղեկավար կազմին ներկայացրեց ոստիկանության նորանշանակ պետ, գնդապետ Վահե Ղազարյանին:

Նիկոլ Փաշինյանը շնորհակալություն հայտնեց Արման Սարգսյանին՝ կատարած աշխատանքի համար, ապա՝ անդրադառնալով ոստիկանության կատարած աշխատանքներին՝ վարչապետը հատկապես կարևորեց համավարակով պայմանավորված արտակարգ ռեժիմով ծառայությունը:

Վահե Ղազարյանը վստահության համար շնորհակալություն հայտնեց վարչապետին և հավաստիացրեց, որ լավագույնս կկատարի կառույցի առաջ դրված խնդիրները:

Հարգելի՛ պարոն Ղազարյան, հաջողություններ ենք մաղթում Ձեզ ժողովրդին ծառայելու սրբազան գործում:

ԶՅ ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԻՆ ՇՆՈՐՀԿԵՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳԻՐ

Պետական հավատարմագրման գործընթացը նախատեսված է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով, որոնց հիման վրա բարձրագույն ուսումնական հաստատությունները պետք է սահմանված ժամկետներում դիմեն Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն (ՈԱԱԿ)՝ նախատեսված գործընթացը կազմակերպելու համար:

Պետական հավատարմագրումն իրականացվում է պետության կողմից սահմանված 10 չափանիշների հիման վրա, որի նպատակն է հավաստիանալ, թե բարձրագույն ուսումնական հաստատությունը համապատասխանում է սահմանված չափանիշներին, թե ոչ: Համապատասխանելու դեպքում բուհն ընդգրկվում է պետական գրանցամատյանում և համապատասխանելու է եվրոպական կրթական տարածքում տրամադրվող կրթական մակարդակին:

2018թ. դեկտեմբերի 21-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրը սահմանված կարգով դիմել էր ՈԱԱԿ վերոհիշյալ գործընթացը կազմակերպելու համար, որը սովորաբար տևում է մեկ տարի: 2019թ. սեպտեմբերի 16-20 ՈԱԱԿ-ի և կրթահամալիրի միջև կնքված պայմանագրի համաձայն տեղի ունեցավ փորձագիտական խմբի այց՝ կրթահամալիրի ռեսուրսների և ծրագրերի գնահատման համար:



2019թ. դեկտեմբերի 18-ին ՈԱԱԿ-ում տեղի ունեցավ Հավատարմագրման հանձնաժողովի նիստ:

Հավատարմագրման հանձնաժողովը բարձր գնահատեց կրթահամալիրի ղեկավարության կատարած աշխատանքը և այն հստակ ուղին, որը կրթահամալիրը նախանշել է հետագա զարգացման համար, ապա՝ շնորհվեց պետական հավատարմագիր՝ 4 տարի ժամկետով:

Հավալի առնելով երկրում ստեղծված արտակարգ իրավիճակը՝ ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարությունը մի փոքր ուշացումով՝ հունիսի 11-ին, ՀՀ ոստիկանության կրթահամալիրին հանձնեց հավատարմագրման պետական վկայագիրը:

ՀՀ ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՎՃԱՐՈՎԻ ՌԻՍՈՒՑՄԱՆ՝ 2020/2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Ուսման տևողությունը 4 տարի է, կիսամյակային վարձավճարը՝ 250000 դրամ: Ընդունելության մրցույթը

ՀՀ ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀՀ ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԲԱԿԱԼԱՎՐԻՍԻՆ՝ ԵՎ ԶՈՒՆԶԻ 2020/2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ալկադեմիան /այսուհետ՝ Ալկադեմիա/ իրականացնում է բակալավրի կրթական ծրագրով «Իրավագիտություն» մասնագիտությամբ «Իրավագիտության բակալավր» որակավորմամբ առկա ուսուցման ձևով ուսուցում: Ուսման տևողությունը 4 տարի է: Շրջանավարտներին շնորհվում է «ոստիկանության լեյտենանտ» կոչում, և նրանք նշանակվում են ՀՀ ոստիկանության համապատասխան ծառայությունների միջին խմբի պաշտոններում:

հաջողությամբ անցած դիմորդների հետ մինչև նրանց որպես 1-ին կուրսի սովորողներ հրամանագրելը կնքվում է պայմանագիր, որի տեքստին դիմորդները ծանոթանում են մինչև փաստաթղթերը հանձնելը:

Ուսումնական պլանով նախատեսված ողջ դասընթացը և ամփոփիչ ատեստավորումն անցած շրջանավարտներին շնորհվում է «Իրավագիտություն» մասնագիտությամբ իրավագիտության բակալավրի աստիճան և տրվում պետական մոուլի դիպլոմ:

2. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջը /այսուհետ՝ Քոլեջ/ իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագրով «Ոստիկանական գործ» մասնագիտությամբ «Ոստիկանության սպա» որակավորմամբ առկա ուսուցման ձևով ուսուցում: Ուսման տևողությունը 2 տարի է: Շրջանավարտներին շնորհվում է «ոստիկանության լեյտենանտ» կոչում, և նրանք նշանակվում են ՀՀ ոստիկանության համապատասխան ծառայություններում՝ տեսուչի պաշտոններում:

3. Ուսուցումն իրականացվում է պետական պատվերի շրջանակներում /անվճար/: Սովորողները համարվում են ՀՀ ոստիկանության ծառայողներ, եւ նրանք ուսման ողջ ժամանակահատվածում ստանում են վարձատրություն՝ Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի չափով:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆԶ ՄԵՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋԸ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական աստիճան ունեցող ծառայողների թիվը համարվեց ևս մեկով, և այսպես՝ հունիսի 9-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈԿ-ի 001 մասնագիտական խորհրդում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի ավագ դասախոս, միաժամանակ կրթահամալիրի պետի ներքին հրամանով քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, ոստիկանության փոխգնդապետ Յուլիանա Կարամյանը պաշտպանեց թեկնածուական ատենախոսությունը՝ «Անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման հիմնախնդիրները ՀՀ-ում» վերտառությամբ:



Կրթահամալիրի ողջ անձնակազմն էլ սրտե շնորհավորում է Հ. Կարամյանին մաղթելով գիտական և ստեղծագործական նոր ձեռքբերումներ:

ԱՍՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՈՒԱԶ



2020 թվականի հունիսի 13-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, 2019-2020 ուստարվա ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ, ի. գ. թ., ոստիկանության գնդապետ Տիգրան Եսայանն անցկացրեց ամփոփիչ ատեստավորման հրահանգավորում, որին մասնակցում էին ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամները, առարկայական

հանձնաժողովների նախագահները և անդամները:
 Տ. Եսայանը շեշտադրում կատարեց ամփոփիչ ատեստավորման ընթացքում հակահամաճարակային կանոնների և ՀՀ Պարետի որոշումների պահանջների պահպանման, քննությունների օբյեկտիվ և արդարացի անցկացման, քննությունների արդյունքներով ՀՀ ոստիկանությունը որակյալ կադրերով համալրելու կարևորության վրա:
 Հրահանգավորման ընթաց-

քում Կրթահամալիրի ակադեմիայի պետ, ի. գ. թ., ոստիկանության գնդապետ Գ. Գրիգորյանը ներկայացրեց պետական քննությունների անցկացման կապակցությամբ Կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մուշեղ Բաբայանի ցուցումներով և գործուն մասնակցությամբ իրականաց-

ված իրավական, մեթոդական և տեխնիկական նախապատրաստական աշխատանքները:
 Հանդիպման ընթացքում Տ. Եսայանը կարևորեց նաև քննական լսարանների օրնախաճանաչման, օրնախաճանաչման միջոցների բավարար քանակության ապահովման, պարտադիր ջերմաչափման, բժշկա-

կան դիմակների տրամադրման, Կրթահամալիրի տարածքում և լսարաններում սոցիալական հեռավորության պահպանման, քննությունների ընթացքում տեխնիկական և կապի միջոցների անխափան աշխատանքի ապահովման և գործընթացի հետ կապված այլ հարցեր:



Բուժաշխատողի օրը նշվում է հունիսի 21-ին: Առողջությունն այնքան է գերազանցում կյանքի մնացած բարիքներին, որ, իրոք, առողջ աղքատը երջանիկ է հիվանդ թագավորից: Սիրելի՛ բուժաշխատողներ, աշխարհը Ձեզ է նայում հույսով ու հավատով, քանի որ աշխարհում կորոնավիրուսային համաճարակ է, և մարդիկ ապավինում են միայն Ձեզ: Վստահ եմ՝ հաղթելու եք, միայն չվիստվեք: Լավագույն մասնագետները նրանք են, ովքեր մասնագիտություն ընտրում են առաքելության խոր գիտակցությամբ: Մարդու, առավել ևս՝ բժշկի համար մասնագիտությունն առաջին հերթին առաքելություն է: Ի վերջո, մարդուն առողջություն ու ժպիտ պարզեցնել ամենամեծ առաքելությունն է: Յուրաքանչյուր բժշկի մասնագիտական ուղին սկսվում է երդումից: Հիպոկրատի երդումը պատմականորեն ընդունված բարոյական սկզբունքների ամբողջություն է, որով երդվում են բոլոր բժիշկները՝ բժշկական գործունեությունն սկսելուց առաջ: Երդման տեքստի հեղինակը հույն բժիշկ, բժշկագիտության հայր Հիպոկրատն է: Երդվում են բժշկության աստված Ասկլեպիոսի, առողջության հովանավոր Ասկլեպիասի և այլ աստվածների ու դիցուհիների

ՄԵՐՈՐՅԱ ՀԵՐՈՍ ԲԺԻՇԿՆԵՐԸ



անունով՝ նրանց վկայակոչելով, որ կկատարեն երդումը և գրավոր պարտականությունը, որքան ներեն իրենց ուժերը և թելադրի խիղճը:
 Բուժքույրական գործն ամենամարդասիրական մասնագիտություններից մեկն է՝ առողջապահական համակարգում: Փաստ է՝ բուժքույրը ոչ միայն բժշկի օգնականն է, այլև շատ կարևոր մասնագետ, որը կոչված է իրականաց-

նել առաջին հերթին մարդասիրական առաքելություն: Անձնվեր աշխատանքի համար խորին երախտագիտություն Ձեզ կորոնավիրուսի դեմ պայքարող հերոսներ: Հատկապես այս օրերին անհնար է պատկերացնել համավարակի դեմ պայքարն առանց բուժքույրերի հոգատար ու նվիրված աշխատանքի: Ձեր ամենօրյա աշխատանքի շնորհիվ ապաքինվում են հազարավոր մարդիկ, ձեր ժպիտները հույս են ներշնչում հիվանդության դեմ պայքարում: Եղե՛ք առողջ, գնահատված և սիրված: Բոլոր համաճարակները մարդկանց ինչ-որ բան սովորեցնելու կամ սթափեցնելու համար են, այլ հարց է, թե մեզանից ով ինչ է սովորում և ինչ հետևություններ է անում: Արտակարգ դրությունը բացահայտեց և վերահաստատեց մի քանի պարզ ճշմարտություն. Աստված փակեց մեր բերանները դիմակով, որովհետև հոգնել էր նվնվողից, բամբասանքից, քննադատություններից, զագրախոսությունից: Բնությունը հնարավորություն ստացավ շնչել առանց մարդկանց և ստիպեց մեզ վախենալ ու թաքնվել, որովհետև արդեն ոչնչից չէինք վախենում, այժմ սուրբ հա-

ցին ձեռք ենք տալիս միայն մաքուր ձեռքերով: Պատմության մեջ եղավ բացառիկ դեպք. եկեղեցում դադարեցվեցին աղոթքները, և հավատավորների մուտքն արգելվեց, որովհետև ոմանք այնտեղ էին գալիս միայն մեղքերից ազատ ժամանակ կամ ցուցամոլության համար: Կորոնավիրուսը հավասարեցրեց բոլորին՝ հարուստ ու աղքատ, պաշտոնյա թե բանվոր, հիմա բոլորս հավասար ենք, և ոչ ոք ապահովագրված չէ: Աստված ցույց տվեց մեզ մեր տեղը, թե չէ ոմանք իրենց Աստված էին երևակայում և աստվածային փառքի էին անվերջ ձգտում: Մեր աչքերում բարձրացվեցին և գնահատվեցին բժիշկները, սանիտարները, առաքիչները, փոստատարները, ոստիկանները: Գուցե այս ամենից հետո պետք է հասկանանք, թե իրականում ում պետք է գնահատել ու ինչի համար: Մարդիկ հեռացել էին իրարից, իրենց ընտանիքներից և հարազատներից, սակայն այս համաճարակով և մեկ հնարավորություն տրվեց համախմբվելու:
 Եկել է վերագնահատելու, միջազգային համերաշխության ժամանակը, ուստի պետք է ամբողջ էներգիան և ռեսուրսներն ուղղել աշխարհի համար ընդհանուր դարձած մարտահրավերի՝ կորոնավիրուսի դեմ պայքարին:
 Հավանաբար, ամենակարևոր բանը, որ զգացնիք, մարդկային անմիջական շփման պակասն է, ուստի եկե՛ք ավելի արժևորենք մեր մտերիմներին, նրանց հետ անցկացրած ամեն րոպեն, առանց նրանց մեր կյանքը միօրինակ և անհետաքրքիր է: Շնորհակալ և երախտապարտ ենք Ձեզ, հարգելի՛ բժիշկներ՝ ամեն փրկված կյանքի և ամեն պայքարած ակնթարթի համար:
 Եկե՛ք գնահատենք ոչ նյութական արժեքները:
Լիանա Խրշոյան
ՀՀ ոստիկանության լեյտենանտ




ՄԵԿՆԱՐԿԵՅ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄԸ



2020 թվականի հունիսի 15-ից ՀՀ ոստիկանության կրթահամալիրում մեկնարկեց 2019-2020 ուստարվա ամփոփիչ ատեստավորումը:

Հաջողություն մաղթելով շրջանավարտներին՝ ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ, ոստիկանության գնդապետ Տիգրան Եսայանը հույս հայտնեց, որ նրանք ոստիկանական մեծ ընտանիքը կհամալրեն բանիմաց և օրինապահ կադրերով:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը ևս մեկ անգամ հավաստիացավ հակահամաճարակային կանոնների և ՀՀ պարետի որոշումների պահանջների պահպանման, քննարկման, լսարանների ախտահանման, ախտահանիչ միջոցների բավարար քանակության ապահովման, պարտադիր ջերմաչափման, բժշկական դիմակների տրամադրման, Կրթահամալիրի տարածքում և լսարաններում սոցիալական հեռավորության պահպանման, քննությունների ընթացքում տեխնիկական և կապի միջոցների անխափան աշխատանքի ապահովման մեջ:



ԱՆՄԵՂ ՄԵՂԱՎՈՐՆԵՐԸ

Հունիսի 14-ը ՀՀ-ում նշվում է որպես ԽՍՀՄ շրջանում բռնադատվածների հիշատակի օր:

Բռնադատվածների մասին ՀՀ օրենքի ստորագրման ամսաթիվը՝ հունիսի 14 ը, ընտրվել էր այն պատճառով 1949թ. հունիսի 14-ին «Դավաճան ժողովուրդների արտաքսման մասին» հրամանագրով ԽՍՀՄ ենթակայության տակ գտնվող բազմաթիվ ժողովուրդներ ենթարկվեցին արտաքսության: Բացառություն չէին նաև հայերը: 1949թ. հունիսի 14-ի լույս 15-ի գիշերը տասնյակ հազարավոր հայեր արտաքսվեցին Ալթայի և Կրասնոյարսկի երկրամասեր Հայաստանից, Վրաստանից, Ադրբեջանից և ՌՖՍՀ Կրասնոդարի երկրամասից՝ առանց իմանալու իրենց արտաքսվելու պատճառը: Դա պարզ, ԽՍՀՄի Կոմկուսի վարքով սովորական ազգային դեպրոտացիա էր. հերթականը՝ ԽՍՀՄ-ում իրականացված 52 ազգային դեպրոտացիաներից:

ենթարկվել արտադատարանական կարգով. գ) անօրինական կարգով ենթարկվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցների.

դ) արտաքսվել է նախկին ԽՍՀՄ տարածքից կամ գրկվել քաղաքացիությունից.

ե) արտաքսվել կամ արտաքսվել է որպես բռնադատվածի ընտանիքի անդամ»:

ԽՍՀՄ քաղաքական բռնությունների զոհերը և նրանց ժառանգներն ամեն տարի հունիսի 14-ին Բռնադատվածների հիշատակի օրը, հավաքվում են Երևանի Հաղթանակի զբոսայգում գտնվող Բռնադատվածների հուշահամալիր՝ հիշելու իրենց զրկանքներով լի անցյալը, Հայաստանի հանրությանը հիշեցնելու իրենց ոչ վաղ անցյալի քաղաքական սարսափելի բռնությունները, հարգանք մատուցելու զոհերի հիշատակին, դատապարտելու քաղաքական բռնությունները



Ստավորապես 14-15 հազար հայեր իրենց ընտանիքների հետ գնացքներով արտաքսվեցին դեպի Սիբիր: Արտաքսվածների մեջ կային բարձրաստիճան զինվորականներ, հոգևորականներ, մշակութային գործիչներ և պարզապես սովորական հայեր: Արտաքսվածների մի մասը մահացավ ճանապարհին, իսկ ողջ մնացած մասն էլ տեղավորվեց համակենտրոնացման ճամբարներում:

Հիշեցնենք, որ 1929-1949 թվականներին ստալինյան վարչակարգի զանգվածային բռնությունների զոհ է դարձել ավելի քան 40 հազար հայ, այդ թվում՝ մտավորականներ: Բռնադատվածները կամ «անմեղ մեղավորները» զանգվածային բռնությունների են ենթարկվել, մի մասը գնդակահարվել է, մի մասը՝ մահացել սիբիրյան բանտերում: Գրեթե բոլորն էլ անշիրմ են մնացել:

«Բռնադատվածների մասին» օրենքի համաձայն՝ « Բռնադատված է համարվում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող նախկին ԽՍՀՄ այն քաղաքացին, քաղաքացիություն չունեցող անձը կամ օտարերկրյա քաղաքացին, որը խորհրդային կարգերի ժամանակաշրջանում (սկսած 1920 թվականի նոյեմբերի 29-ից) նախկին ԽՍՀՄ-ի տարածքում քաղաքական շարժառիթներով՝

ա) դատապարտվել է 1961 թվականի ՀՍՄ քրեական օրենսգրքի նախկին խմբագրությամբ 65, 67, 69, ինչպես նաև 206/1 հոդվածներով կամ 1927 թվականի ՀՍՄ քրեական օրենսգրքի նույն բովանդակությամբ հոդվածներով կամ նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների քրեական օրենսգրքերի համապատասխան հոդվածներով, քաղաքական այլախոհությունը ճնշելու կամ սահմանափակելու նպատակ հետապնդող այլ հոդվածներով և հետագայում արդարացվել է.

բ) քրեական պատասխանատվության է

և ամփոփելու Հայաստանի Հանրապետության քաղաքական ազատությունների իրավիճակը:

Տարեցտարի, սակայն, հուշահամալիր այցելողների թիվը կրճատվում է, քանի որ կրճատվում է նաև ողջ մնացած բռնադատվածների թիվը:

«Հուշամատյան» ընկերության տվյալներով՝ Հայաստանում մոտ 6000 բռնադատված և 8400 բռնադատվածների ժառանգներ կան, ովքեր 1937 և 1949 թվականներին արտաքսվել էին Հայաստանից:

Բռնադատվածները համարյա նույնպիսի տառապանքներ են տարել, ինչ ցեղասպանություն վերապրածները: Այս օրը չպետք է մոռացվի, քանի որ ոչ պակաս դառնություն է բերել մարդկանց, ովքեր արտաքսվել, տառապել ու տանջվել են երկար տարիներ: Մեծ թվով մարդիկ չդիմացան տառապանքներին, շատերն էլ ոտքի կանգնեցին հայկական տոկունությամբ ու աշխատասիրությամբ և կարողացան պատվով վերադառնալ Հայաստան: Սակայն դա սպի է, որը մշտապես մնում է հոգու մեջ:

Բռնադատվածության զոհերի ժառանգները պատմում են, թե ինչպես են առանց դատ ու դատաստանի, ավտոմատներով գիշերով մտել իրենց տները և ամբողջ ընտանիքին տարել կայարան, ուղարկել անհայտ ուղղությամբ: Իրենք էլ չգիտեին, թե որ մեղքի համար են պատժվում: Հունիսի 14-ի գիշերը երկու ժամվա մեջ 14 հազար հոգու արտաքսեցին 3 հազար ընտանիք:

Նրանց տառապանքը ողջ հայության տառապանքն է, նրանց հիշատակը՝ սրբություն:

Մեզ մնում է թախանձագին դիմել Բարձրյալին, որ այսուհետ մեր տառապած ժողովրդին զերծ պահի ցնցումներից ու աղետներից:

Արուսյակ Քոչարյան



«Համագործակցության ամրապնդման համար» մեդալով պարգևատրվում են ՀՀ ոստիկանության խնդիրների իրականացման, ՀՀ ոստիկանության համակարգի գործունեությանն աջակցություն ցույց տալու, ինչպես և միջազգային իրավապահ մարմինների միջև համագործակցության ամրապնդման գործում զգալի ավանդներ դնելու համար:



«Ոստիկանությունում երկարամյա ծառայության համար» 1-ին աստիճանի մեդալով պարգևատրվում է այն ծառայողը, ում ծառայության ստաժը ոստիկանությունում օրացուցային հաշվարկով կազմում է 20 տարի:

ՍԵՆՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐՈՆԸ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Մենք ծանոթ-անծանոթներ ենք, Միմյանց տեսնելիս չենք էլ բարևում, Ո՛չ նրա համար, որ անծանոթ ենք, Այլ գուցե պարզապես ծանոթանալ ենք ուզում...

Անծանոթ ենք, անծանոթ տակավին, Բայց տեսնել ենք ուզում քեզ կրկին, Ուզում են լուռ կարդալ քո հոգին Ու սպասե՛լ, սպասե՛լ քո ջերմ բարկին:

Մենք ծանոթ-անծանոթներ ենք, Նախկինում անգամ չենք էլ հանդիպել, Բայց ինձ թվում է՝ ոչ վաղ անցյալում Իմ երազների ասպետն ես եղել:

Անծանոթ ենք, անծանոթ տակավին, Բայց ժպիտդ գերում է իմ հոգին, Խառնում է իրականն ու ցանկալին... Ուզում ենք անվերջ լինել քո կողքին:

Դու՛, իմ խորհրդավոր ծանոթ, Բայց անծանոթ տակավին:

ԻՆՉ ՇՈՒՏ ՄԵԾԱՑԱՐ

Առաջին անգամ ոտքի կանգնեցիր, Տարտամ քայլերով առաջ ընթացար, Քո թոթով լեզվով հոգիս ցնցեցիր, Ա՛խ, իմ հրեշտակ, ի՛նչ շուտ մեծացար:

Գրքերդ առած՝ դպրոց գնացիր, Գիր ու գիտությամբ դու հարստացար, Քեզ համար կանաչ ճամփա հարթեցիր, Ա՛խ, իմ անուշիկ, ի՛նչ շուտ մեծացար:

Մի օր էլ բուռի դուռը բախեցիր, Կյանքի դպրոցում դու իմաստնացար, Ազգիդ պատիվը բարձր պահեցիր, Ա՛խ, իմ լավ տղա, ի՛նչ շուտ մեծացար:

Քո սրտի կանչով սահման գնացիր, Թե՛ մարտերի մեջ դու արիացար, Քո սուրբ երդմանը հաստատ մնացիր, Ա՛խ, իմ քաջորդի, ի՛նչ շուտ մեծացար:

Սուրբ խորանի առջև կանգնեցիր, Թագը պսակի քո գլխին առար, -«Տե՛ր եմ»,- վեհորեն պատասխանեցիր, Ա՛խ, իմ թագավոր, ի՛նչ շուտ մեծացար:

Մի գեղեցիկ օր որդի կունենաս, Նույն ռիթմով նորից կյանքը կհոսի, Մագերդ ճերմակ պապիկ կդառնաս, -Ի՛նչ շուտ մեծացար,- թող քեզ կասի:

Միլենա Հակոբյան
ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի
3-րդ կուրսի սովորող

Ռ. Մուսաբեյան
լեզուների ամբիոնի ուղեցնատ,
ոստ. գնդապետ

Արդեն 75 տարի շարունակ ամռան առաջին օրը՝ հունիսի 1-ը, նշվում է որպես երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օր: 1925 թվականին երեխաների պաշտպանության համար ժնկում հրավիրված համաշխարհային կոնֆերանսում սահմանվել է երեխաների պաշտպանության օրը: 1949-ին Կանադայի ժողովրդավարական միջազգային դաշինքը երեխաների պաշտպանության օր անցկացնելու որոշում է ընդունել: Առաջին անգամ հունիսի 1-ը նշվել է որպես երեխաների պաշտպանության միջազգային օր 1950 թվականին:


Հստակ հայտնի չէ, թե ինչու է հունիսի 1-ն ընտրվել որպես երեխաների պաշտպանության միջազգային օր, սակայն կա մի տեսություն՝ համաձայն որի հունիսի 1-ը չինական-ամերիկյան ծագում ունի և որևէ առնչություն չունի կոմունիզմի հետ: 1925թ. Չինաստանի գլխավոր հյուպատոսը Սան Ֆրանցիսկոյում հավաքել էր չինացի մի քանի որբերի՝ մասնակցելու առասպելական թևավոր վիշապի՝ դրակոնի նավի տոնակատարությանը, որն այդ տարի նշվում էր հունիսի 1-ին:

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան 1954թ. դեկտեմբերի 14-ի իր որոշմամբ հանձնարարեց սահմանել երեխաների համընդհանուր օր, որը պետք է նշվեր ամբողջ աշխարհում որպես երեխաների եղբայրության և փոխըմբռնման օր:

Հայաստանը երեխաների իրավունքների մասին կոնվենցիան վավերացրել է 1992 թվականին, որից հետո 1996թ. ընդունվել է «Երեխայի իրա-

ԱՆՅՈՒՑ ՈՒ ԽԱՂԱՂ ԿՅԱՆՔ ՁԵՁ, ՍԻՐԵԼԻ՝ ՓՈՔՐԻԿՆԵՐ

Երեխաները միանգամից ընտելանում են երջանկությանը, քանի որ նրանք հենց ուրախություն ու երջանկություն են: Գ.Հյուզ
Մեր երազանքներում մենք միշտ մի ոտքով մանկության մեջ ենք: Զ.Ֆրեյդ



վունքների մասին» ՀՀ օրենքը: Երեխաների պաշտպանության միջազգային օրն ունի նաև իր խորհրդանշական դրոշմը:

Դրոշի կանաչ գույնը խորհրդանշում է աճ, ներդաշնակություն, թարմություն, պտղաբերություն և հարստություն: Երեխաները շրջապատված են աճի և զարգացման ունակությամբ և հնարավորությամբ, պետք է միայն ձգտել օգտվել դրանցից: Կարմիր և դեղին, սև և սպիտակ պատկերները խորհրդանշում են բազմազանություն և հանդուրժողականություն: Երեխաներն են խաղաղության և ռասայական, կրոնական, ֆիզիկական, մտավոր և սոցիալական բազմազանության հանդեպ հանդուրժողականության լծակները: Պատկերի ոտքերով ձևավոր-

ված աստղը խորհրդանշում է լույսը, քանի որ երեխաներն են աշխարհի լույսը: Աստղի հինգ ծայրերը խորհրդանշում են մայրցամաքները: Ճիշտ կենտրոնում գտնվող երկրագնդի պատկերը խորհրդանշում է մեր երկրային տունը և այնտեղ եղած բոլոր բարիքները, որ Աստված շնորհել է մեզ՝ իրար հետ կիսելու և միմյանց հարգելու համար: Պատկերները կլանող մանուշակագույն մեծ շրջանակը խորհրդանշում է խաղաղությունը և Աստծո անսահման սերը, ինչպես նաև այն միասնականությունը, որին կարելի է հասնել սիրո շնորհիվ: Մանուշակագույնը խորհրդանշում է վստահություն, հավատարմություն, իմաստություն, բանականություն, հավատ, ճշմարտություն: Վերնամասի կապույտ պատկերը խորհր-

դանշում է Աստծուն՝ աշխարհի Արարչին: Աստված սիրում է բոլորին հավասարապես, և մարդիկ նույնպես պետք է ձգտեն Աստծո նման հավասարապես սիրել: Հենց այդպիսի սերն են խորհրդանշում տարբեր կողմեր ձգվող բազմազույն պատկերները:

Ճիշտ է, սա երեխաների տոնն է, բայց միևնույն ժամանակ հիշեցում, որ մենք՝ ավագներս, պատասխանատու ենք երեխաների ճակատագրերի համար: Մենք անում ենք հնարավոր մեր երեխաների երջանկության համար, որպեսզի նրանք մեծանան որպես Հայաստանի Հանրապետության լիիրավ քաղաքացիներ: Մենք պետք է հենարան տանք նրանց, սովորեցնենք լինել բարի, տեսնել գեղեցիկը, գնահատել ազգային և համամարդկային արժեքները: Մենք պետք է սիրենք և պաշտպանենք ոչ միայն մեր, այլև բոլոր մանուկներին: Փորձենք մի պահ դուրս գալ մեղ ընտանեկան շրջանակից և քայլեր անել բոլոր երեխաներին պաշտպանելու, մեզ տրված հնարավորություններն օգտագործել այնպես, որ երեխաների յուրաքանչյուր օրը լինի բազմազան ու գունագեղ, գործվանքով ու քնքշանքով լի: Պաշտպանենք մեր ապագան: Սիրենք ու անհոգ մանկություն ապահովենք մեր երեխաներին,

որովհետև նրանք ոչ միայն մեր երեխաներն են, այլև ապագա ոստիկանները, բժիշկները, ֆիզիկոսներն ու քիմիկոսները, ծրագրավորողները, իրավաբանները, լրագրողներն ու պարզապես այս հասարակության կերտողները: Երեխաներին ընդունենք այնպիսին, ինչպիսին իրենք կան, ճանաչենք նրանց անձը և օգնենք կատարելագործվել: Թող աշխարհի բոլոր երեխաները մեծանան տաքուկ ընտանիքներում՝ պարուրված ծնողական անփոխարինելի սիրով, և թող իրենց վառ աշուկներով լուսավորեն մեր այսօրն ու ապագան:

Ցավոք, այս տարի այս անիծյալ թագավարակը մեր մեջ խեղդեց այն մեծ ոգևորությունն ու ուրախությունը, որ ունենում էինք ամեն տարի ինչպես բոլոր տոներին, այնպես և Երեխաների պաշտպանության օրը:

Սիրելի՛ փոքրիկներ, շնորհավորում ենք այս ջերմ ու գեղեցիկ տոնի կապակցությամբ, մաղթում ձեզ առողջություն, անհոգ ու խաղաղ մանկություն ընտանեկան ջերմություն, ուժեղ և ապահով հայրենիք: Թող ձեր յուրաքանչյուր օրը տոն լինի ձեզ համար, և անկեղծ ժպիտն ու սերը հարատևեն ձեր կյանքում:

Աննա Սարուխանյան
ոստիկանության կապիտան